ԱՂՔԻԲԱՐ



№№ 5—6 ՄԱՅԻՍ-ՅՈՒՆԻՍ 1909

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սաթիկն ու ուլիկը	—	Պատկեր
Ուլիկը	—	Ալթ. Խնկոյեան
Մօր սպառնալիքը որդուն	—	Լ. Մ.-Ադամեան
Ամենքից լաւը ելի մեր բոյնն է (փոխադր).		Օր. Ն. Գրիգորեան
Հովւի աղօթքը, (Արաբ. Լեգենտ Л. Толстой)		Տ. ք. Վարդանեան
Հովւի աղօթքը, (Հայկական աւանդ.)		» » »
Նոր գործ (ոտանաւոր)	—	Մն. Թամրազեանց
Լոքու բղուղը (ժողովր. հեքիաթ վրաց.)		Գ. Բաբուրեան
Օդակաւոր եղջերուն (պատկերով) թարգմ.		Ջ. Տ. Գ.
Հայրիկի-մայրիկի նման	—	Պատկեր
Դժբաղդ երեխաները (շար. և վերջ)		Սէյրի
Ի՞նչ է սպասում (ոտանաւոր)	—	Գ. Մնգիբարեան
Աբրահամ Լինկօլն (պատկերով)	—	

Մանկական Աշխարհ

Ազգ	—	Ամբիկ
Ֆարհատ	—	Պատկեր
Երկրորդ խմբագիր Մանկական Աշխարհի		Ֆարհատ
Գարնան դալուստը (բանաստեղծ.)	—	Գէորգ Վարդանեան

Ժամացոյց

Առաջարկութիւն	—	Յովհ. Կարապետեան
Հանելուկ	—	Գ. Բ.
Կախարդական աստղ № 1	—	Ռուբէն Մուսայէլեան
Թռչնամսեան տիկին	—	Պատկեր

Ցանկ

Աղբիւրի Ակունքը.

Կոստանդին Մարտիրոսեանց: Տ. Սրբուհի երիցեան: Տ. Սոֆիա Բաբայեան: Փիլիպոս Վարդանեան: Եղիշէ քահ. Տէր-Աստուածատրեան: Ներսէս Աբէլեան: Պողոս Քալանթարեան-Աբրաքսեան: (Պատկերներ կենսագրութիւններով):

Խմբագրութիւնից: Մեր բաժանորդներին: Աղբիւրի պատասխաններ: Քաղաքակրթ. գիւղերում: Խմբագրութեան գրասենեակից:

Յայտարարութիւններ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Աղբիւրի ներկայ №№ 5—6 պօստ են դցւում դրսի բաժանորդներին (աշակերտներին) յունիսի 1-ին: Իսկ Աղբիւր-Տարազ միևնոյն հասցէով բաժանորդներին կուղարկուեն Տարազի հետ, որ լոյս կը տեսնի Վեհափառ Տ. Տ. Մատթէոս Բ. Կաթողիկոսի ամենավերջին (Պօլսից մեկնելուց առաջ լուսանկարուած) պատկերի կլիշէն ստացուելուց յետոյ, մօտաւորապէս յունիսի 10—12-ին: Աղբիւրի աշակերտական բաժանորդներից Տարազի արտակարգ այդ №-ը մինչև յունիսի 15-ը ձեռք բերել ցանկացողների համար փոխանակ մի րուբլու Տարազի այս №-ը արժէ 50 կ:

Հասցէն պէտք է ուղարկել տպագրուածը, պոկելով այս №-ի վրայ կպցրած բանդերօլից:

XXVII **ԱՂԲԻՒՐ** XXVII

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԵՒ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Քառասներորդ տարի 1909 №№ 5—6. Մայիս-Յունիս

Խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Նազարեան

ՈՒԼԻԿԸ

I.

Մէջքը տաճ տան պատին,
Բուբդը փաթթած իր մատին,
Նուշիկ նանը թել մանեց
Եւ մի երկար թոկ շինեց,
Որ կապի իր ուլիկին՝
Էն սատանայ մուլիկին։

II.

«Նուշիկ նանի, ջան նանի,
Դու էդ բանը մի անի.
Քարը գոգիցդ թափի,
Ինձ էդ թոկով մի կապի.
Ինձ մի ղրնի դու բանտը,
Թող մի գնամ ես հանդը.
Գնամ մի գայլ ըսպանեմ,
Մօրս վրէժը հանեմ,
Մորթին կանես դու կաւկոխ*)...
Նուշիկ նանի, ղէհ, բաց թող»,—

*) Մորթու վրայ ցանում են կաւ և ոտով տրորում։

Ասաւ. Թռաւ ուլիկը՝
Էն սատանայ մուլիկը։
Վըզգաց-գնաց ուլիկը՝
Էն անդադար ամլիկը,
Ելաւ-ընկաւ սարէ սար,
Թռաւ ելաւ քարէքար.
Բարձըր բարձըր մըկըկաց...
—Հաւ, դիւժ ուլիկ, դու մի կաց.
Հըէս եկաւ չար գայլը,
Մի տես աչքերի փայլը։

III.

—«Շնորհաւոր քո գալը,
Ո՞նց է, ուլի՛կ, քո հալը.
Ե՛կ բարև տար քո մօրը,
Վեց-վեց կանի իմ փորը»,—
Ասաւ-բռնեց գայլը չար,
Պատառոտեց չարաչար.
Քամուն տըւեց մազերը,
Թողեց միայն պոզերը,
Էն էլ նըշան Նուշիկին,
Թէ որ մանգայ գժուլիկին։

Ս.ր. Խճկոյեան

ՄՕՐ ՍՊԱՆՆԱՀԱՔԸ ՈՐԴՈՒՆ

Գուրգէնիկը մի չար և ծոյլ տղայ էր։ Նա ոչ ծնողների խրատ ու յորդորներին էր ականջ դնում, ոչ ուսուցիչների ասածների վրայ ուշ դարձնում։

Բացի դրանից, Գուրգէնիկը ուրիշ տգեղ սովորութիւններ էլ ունէր։ Նա առանց յարգելի պատճառի՝ դիմացինի հետ խօսակցելիս անտանելի կերպով սկսում էր երեսը ծամածռել, կամ մի չնչին, մի ոչինչ պատճառի համար բղաւում-ճղաւում էր, ընկերների հետ կռւում, հետները ծեծկռւում։

Իր այդպիսի անտանելի վարմունքներով Գուրգէնիկը այնտեղը հասցրեց, որ ընկերների համբերութիւնը հատաւ, որոնք մտածեցին մի այնպիսի պատիժ տալ նրան, որ դնայ խելքը գլուխը հաւաքի։

Եւ նրանք վճռեցին, որ այլևս ոչ Գուրգէնիկի հետ խաղան և ոչ էլ հետը խօսեն։

Երբ ընկերները հաւաքւած խօսելիս էին լինում և կամ խաղալիս ու Գուրգէնիկը մօտենում էր, նրանք խօսքոյն սուս էին կենում, խաղն ընդհատում և երեսնին շուռ տալով՝ անմիջապէս հեռանում։

Գուրգէնիկը բարկանում էր, ինքն իրան ուտում, սաստիկ յուզմունքից շրթունքները կրծոտում... Սակայն ինչ կարող էր անել. ինչպէս որ ինքն իրաւունք էր համարում իրան չիմարութիւններ անելու, այնպէս էլ նրանք էին ազատ՝ իրանց ուզածի պէս վարուելու։

Ամեն անգամ երբ ընկերներն այդպէս էին անում, Գուրգէնիկը խելոյն, անմիջապէս վազեվազ գնում էր տուն, մի ճիպոտ վերցնում և ընկնում իրանց բակի թըռչունների ջանին, նրանց հակալ-հակալ անում—հալածում, տանջում, ենթադրելով թէ այդ կերպով ընկերներիցն է վրէժ լուծում։

Երբ մի օր էլի սկսեց այդպէս անսիրտ կերպով բա-

դի ձագերին չարչարել, ձագամերը սաստիկ բարձրացաւ Գուրգէնիկի վրայ և կամենալով իրա փոքրիկներին պաշտպանած լինել, վրայ ընկաւ ու մի լաւ կծեց նրա ձեռքը։

Սաստիկ ցաւեց կրակ կտրած Գուրգէնիկը գնաց մի ձողի բերաւ ու սկսեց անխնայ ծեծել խեղճ անասունին։

Գուրգէնիկի մայրը, որ տեսել էր ամեն բան, շտապեց որդու մօտ։

—Ամօթ քեզ, Գուրգէնիկ, ամօթ... Մէթէ չես ամաչում. այդ անլեզու խեղճ անասունները քեզ ինչ են անում, որ ամեն Աստծու օր այդպէս հալածում ես ու տանջում. մեղքը չէն։

—Հապա ինչո՞ւ ձեռքս կծեց։

—Եւ շատ լաւ արաւ, որ կծեց... եթէ դու նրա ձագերին հակա-հակա չանէիր, մայրը համբերութիւնից չէր դուրս գալ և քեզ չէր կծիլ։ Մայրը խօմ չէր թողնելու, որ դու իրա երեխաներին շարունակ տանջես։ Դու արժանի էիր այդ պատժին։ Բայց եթէ կամենում ես որ ո՛չ-ոք քեզ ո՛չ մի վնաս չտայ, այն-ժամանակ ինքդ էլ ուրիշներին չպէտք է վնաս տաս... Սակայն ո՛ւմն եմ ասում այս խօսքերը. չէ՞որ վաղուց է ինչ դու դադարել ես լաւ բաները հասկանալուց, ինչպէս-որ ես էլ յոգնել եմ քեզ խրատելուց։ Բայց ահա էլի մի անգամ, մի վերջին անգամ ասում եմ.

—Սիրելի՛ Գուրգէնիկ, եթէ խելքդ գլուխդ չըհաւաքես —եթէ չուղղուես, եթէ քո անասնելի սովորութիւններից ձեռք չըվերցնես, այն ժամանակ ես էլ, հայրիկդ էլ՝ ընկերներիդ պէս կանենք, այն է՝ կըդադարենք հետդ խօսելուց... Ինչո՞ւ ես այդպէս աչքերդ չռում, վրաս նայում. ուղիղն եմ ասում։ Եւ ո՛չ-միայն հետդ չենք խօսիլ, այլ երեսիդ անգամ չենք նայիլ. որովհետև մեր ինչի՞ն է պէտքը քեզ նման ոգեղ սովորութիւններ ունեցող զաւակը։ Լա՛ւ մտածիր այս ասածներիս վրայ, եթէ խելք ունես. ես կատակ չեմ անում, որովհետև դու քո անտանե-

լի վարմունքներով կատակ անելու սիրտ չես թողել ինձանում,— ասաց վշտացած մայրն ու հեռացաւ։

Մօր այդ արդարացի յանդիմանութիւնները, բայց մանաւանդ նրա սպառնալիքը՝ թէ տանն էլ ևս հետը չեն խօսելու, սարսափեցրին Գուրգէնիկին։

Ընկերների տւած պատժից նա փորձով գիտէր, թէ որքան ծանր ու դժւար է մարդուս համար, երբ սիրելի ընկերները ոչ-միայն հետը չեն խօսում, այլև երես են շուռ տալիս, փախչում նրանից, ինչպէս թշնամուց։

Եւ եթէ ընկերների այդպէս անելը այդ աստիճան ծանր է ու դժւար, հապա որքան աւելի ծանր ու դժւար կըլինի իրա համար, եթէ սիրելի ծնողներն այդպէս անեն։

«Օ՜... այդ անչափ դժւար կըլինի ինձ համար,—ինքն իրան սկսեց խօսել Գուրգէնիկը.—ոչ, ոչ, այդ լինելու բան չէ. անպատճառ պէտք է դրա առաջն առնել... Ի՞նչպէս կարելի է որ հայրիկս ու մայրիկս հետս չըխօսեն... Այո, ես այլևս չեմ ուզում վատ տղայ լինել»։—Վերջին խօսքերը համարեա նա արտասանեց բարձրաձայն ու մտքի մէջ մի բան վճռեց և հաստատ քայլերով գնաց տուն, վերցրեց դրքերն ու սկսեց դասերը պատրաստել։

Գուրգէնիկը դեռ ոչ մի անգամ այդպէս ուշադիր, այդպէս արտանց դաս չէր պատրաստած։

Այդ օրից սկսած՝ Գուրգէնիկը փոխւեց դէպի լաւը. նա բոլորովին ձեռք վերցրեց իր անդուր սովորութիւններից։ Եւ մի կարճ միջոցից յետոյ ոչ-միայն ուսուցիչների ամենայառաջադէմ ու աշխատասէր աշակերտներից մինը եղաւ, այլև սկսեց իրան այնպէս լաւ պահել, այնպէս քաղաքավարի, ամենքի հետ այնպէս քաղցրութեամբ վարւել, որ դարձաւ իր բոլոր հասակակիցների ամենալաւ ու յիրելի ընկերը, իսկ ծնողների քաղցր յոյսն ու աչքի լոյսը։

Լեւոն Մելիք-Ադամեան

ԱՄԵՆԻՑ ԼԱՒԸ

ԷԼԻ ՄԵՐ ԲԱՑՆԻՆ Է

Երկու լորամարգի ցորենի արտի մէջ բոյն հիւսեցին—իրանց համար տուն շինեցին ու մէջը մտան։

Մարին—մայը լորամարգին երկու ձու ածեց ու թուխս նստեց։ Այդ ձուերից երկու փոքրիկ լորիկներ դուրս եկան։

Լորիկները մի շաբաթական կը լինէին, երբ մի առաւօտ, ամեն օրւայ պէս, լորամարգինները թռան գնացին՝ իրանց ձագերի համար կերակուր ճարելու։ Քիչ միջոցից յետոյ մարին վերադարձաւ, իսկ որսը ոչ։ Նա երեկոյեան էլ չեկաւ, չեկաւ նաև միւս օրը։ Էլ չիմացւեց՝ որսորդի գնդակին զոհ եղաւ, թէ գիշատիչներից մէկն ու մէկի ճանգն ընկաւ։

Լորիկները մնացին հօրից որբ, որոնց պահել-պահպանելու հոգսը մնաց մարի լորամարգի վրայ, որ վաղ առաւօտից մինչև երեկոյ ձագերի համար կերակուր էր բերում ուտացնում, իսկ գիշերը իր մայրական թեւերի տակ առած՝ ցրտից պաշտպանում։

Լորիկները հէնց որ շահացան, մարին սկսեց նրանց վարժեցնել թռչելու բնի մօտերքը ամեն առաւօտ, ապա նրանց թողնում էր բնի մէջ ու ինքը գնում նրանց համար կերակուր ճարելու։

Մի օր մարի լորամարգին երբ սովորականից շատ ուշա-

ցաւ, լորիկները ձանձրութիւն զգացին բնի մէջ նստած մնալուց. ուստի վճռեցին գնալ-պտըտնել, նոր-նոր տեղեր, նոր-նոր մարդիկ տեսնել։

Ասիլն ու անիլը մին արին։

Նրանք իսկոյն թռան գնացին։ Անցան ոսկեզոյն արտերի, կանաչապատ դաշտերի, սիրուն-սիրուն մարգագետինների վրայով ու մտան մի մեծ անտառ և շարունակեցին առաջ ընթանալ։

Երբ յոգնեցին, նրանք նստեցին մի թփի վրայ, որ միքիչ շունչ քաշեն-հանգստանան։ Ահա այդ միջոցին, որտեղից որտեղ մի մեծ ամպ քօղի նման ծածկեց արեգակի երեսը։

Այդ բանից անտառը մի տեսակ մթութեան մէջ ընկաւ և երկիւղ ազդեց երկու քոյր լորիկներին. իսկ երբ ամեն կողմից էլ լսեցին դիշատիչ թռչունների կռան-չոցները, մեր լորիկների թուքը բոլորովին ցամաքեց. երկիւղից սկսեցին դողդողալ։ Եւ նրանք հիմա միայն հասկացան իրանց արած սխալը, որ առանց մայրիկին ասելու տանից հեռացել էին։

—Վըխ, այն ինչ մեծ թռչուն է,—երկիւղով բռնուած շշնջաց լորիկներից մինը.—ես վախենում եմ։

—Տէր Աստուած,—բացականչեց միւս լորիկը,—հապա եթէ նա յարձակւի մեզ վրայ, ով պէտք է պաշտպանի մեզ։ Այս ինչ սարսափելի տեղ է։ Ա՛խ, մայրիկջան, ուր ես, հիմա ինչ ես մտածում մեր մասին։

—Չէ, այստեղ մնալ անկարելի է, քո՛յրիկ։

—Այո՛, այո՛, շուտ գնանք մայրիկի մօտ։

Ասացին լորիկները ու իսկոյն թռան. բայց միքիչ թռչելուց յետոյ երկիւղով բռնուած կանգ առան, որովհետև ճանապարհը կորցրել էին, չգիտէին ո՛ր կողմով պէտք է առաջ ընթանան։

Երբ թռչնիկները մնացել էին այդպէս մոլորուած ու չգիտէին իրանց անելիքը, նրանց մօտեցաւ իրանց ազգականուհի կաքաւը։

Լորիկները անչափ ուրախացած, իսկոյն նրան դիմեցին.

—Սիրելի մօքիը, այսօր առանց մայրիկին ասելու տանից դուրս եկանք. հիմա ուզում ենք վերադառնալ, բայց ճանապարհը կորցրել ենք, չգիտենք ինչպէս գնանք. խնդրում ենք՝ մեզ ցոյց տաս ճանապարհը։

—Ա՛խ, ախ, ախ... ինչ անզգուշութիւն ձեր կողմից,—յանդիմանեց նրանց կաքաւը։—Ի՛նչ լաւ, որ այս տեղի գիշատիչ թռչունները ձեզ չեն տեսել, թէ չէ դուք նրանցից չէիք ազատուիլ։ Դէ, շուտ, էլ ժամանակ մի՛ր կորցնիլ։ Ահա այս գծով ուղիղ գնացէք. հէնց որ հասնէք մացառուտներին, միքիչ թեքուեցէք աջ ու այլևս առանց կանգ առնելու շարունակեցէք ձեր ճանապարհ, որ քանի մութը չի ընկել, տեղ հասնէք։

—Շնորհակալ ենք, սիրելի մօքիը,—ասացին լորիկները ու իսկոյն սլացան նրա ցոյց տւած ուղղութեամբ և բոլորովին յոգնած ու ուժասպառ տուն հասան։

—Ո՛ւր էիք, իմ սիրելիք,—հարցրեց մայրը.—ես սաստիկ անհանգիստ էի ձեր մասին։ Մ՛իթէ կարելի է այդպէս անզգոյշ լինել։ Հապա եթէ մի գիշատչութիւն պատահէր ձեզ, ովքեր պէտք է լինէին իմ բալիկները։

—Ի՞նչ անէինք, մայրիկ-ջան, դու շատ ուշացար, ու մեր սիրտն էլ ուզեց գնալ զբօսնել, ուրիշ-ուրիշ տեղեր, ուրիշ-ուրիշ մարդիկ տեսնել։ Եւ ինչքան լաւ-լաւ ու գեղեցիկ բաներ տեսանք թռչելիս... Բայց, մայրիկ-ջան, ինչ էլ որ լինի, ամենից լաւը էլի մեր բոյնն է եղել, ասացին լորիկներն ու աւելի մօտեցան իրանց մօրը։

—Այո՛, իմ սիրելիք, շատ ճիշտ է. անչափ ուրախ եմ, որ ինքներդ էլ համոզուեցիք այդ բանում։

Եւ այդ ասելով լորամարգին մայրական քնքշութեամբ իրա թևերի տակն առաւ լորիկներին, որոնք անմիջապէս քաղցր քուն մտան։

Փոխադր. օր. Ն. Դրիգորեան

ՀՈՎԻ ԱՂՕԹՔԸ

(Արաբական լեգենդա)

Л. Толстой.

Յիսուսի ծննդից հազարաւոր տարիներ առաջ Աբրահայի հրաբորբոք երկնքի տակ ապրում էր մի խելագորոյս հովիւ, որը մի անգամ այսպիսի տագնապալի հառաչանք ուղղեց դէպի Աստուած. «Ո՜հ, Տէր Աստուած իմ, արդեօք ես ինչ կերպ կրկարողանայի քեզ մօտ գալ եւ քո ստորովը դառնալ. հրաշիսի ուրախութեամբ ես քո ոտնամանները կը հագցնէի, քո ոտները կը լուանայի ու կը համբուրէի նրանց. կը սանդրէի քո մազերը, շորերդ կը լուանայի, հաւաքատեղակ կանէի քո ընակարանը եւ քեզ համար իմ հօտից կաթը կը բերէի. իմ սիրտս փափագում է քեզ»։

Մովսէսը լսելով հովիւի աղօթքը՝ կատաղութեամբ լցուած բացականչեց.

«Անմիտ, դու հայհոյում ես Աստծուն. Աստուած անմարմին է. նրան ոչ ընակարան է հարկաւոր, ոչ շոր եւ ոչ էլ ապահաւոր. դու վատ բան ես խօսում»։ Բայց Աստուած ընդհատեց Մովսէսին.

«Դու ինչո՞ւ ինձանից փախցնում ես իմ հաւատարիմ ծառային։ Ամեն մարդ իր առանձին խօսքն ունի եւ իր առանձին մարմինը։ Ինչոր քեզ համար վատ է, ուրիշի համար շատ լաւ է. ինչոր քեզ համար թոյն է, ուրիշի համար անուշ մեղր է: Բառերը ոչինչ նշանակութիւն չունին. ես նայում եմ ինձ դիմողների սրտին»։

Տիգրան Ֆ. Վարդանեանց

ՀՈՎԻ ԱՂՕԹՔԸ

(Հայկական աւանդութիւն)

Գեղազարճ Սևանայ լճի ափին ապրում էր մի բարեպաշտ հովիւ. ամեն անգամ, երբ նրան առիթ էր ներկայանում աչքերը դէպի ծովի խորքում թաղնուած մենաստանը դարձնել, նրա շրթունքներն երկիւղածօրէն շշընչում էին. «Ահա թէ որտեղ կարելի է Աստծուն լաւատ սրտով աղօթել. երանի թէ մի օր ինձ յաջողւէր այնտեղ աղօթելու փափագս կատարել. այն ժամանակ մահըն ինձ համար երանութիւն կըլինէր միայն»։

Աստած բարի հովւի աղօթքը լսեց, և սա մի օր ուխտ դնաց Սևան։ Եօթն օրն անցնելուց յետոյ ուխտաւոր հովիւը կամեցաւ վերադառնալ իր հօտերի մօտ։ Բայց ծովը սաստիկ ալեկոծւած էր, և մենաստանի միակ նաւակը սպասում էր փոքր ինչ բարեյաջող եղանակի, որ վանահօրը դէպի ափ փոխադրէր։

Վերջապէս երկար սպասելուց՝ հովւի համբերութիւնը հատաւ և նա մի փառաւոր առաւօտ իր թաղիքեայ վերարկուն փռեց ծովի երեսին, ինքը վրան նստեց ու գընաց. ծովն իսկոյն հանդարտւեց։

Ծովի խաղաղելուց օգտւեց և վանահայրը. նրա նաւակն էլ հմուտ թիավարների ղեկավարութեամբ անյապաղ դէպի յառաջ շարժւեց։

Նա ճանապարհի կէսումը հասաւ հովւին, որ լողում էր թաղիքի վրայ և անընդհատ կրկնում էր միևնոյն աղօթքը. «Աստուած, ես քեզ ողորմիմ. Աստուած, ես քեզ ողորմիմ։»

Վանահայրը վշտացած ու ցասկոտ ձայնով նկատեց. «Օրհնեա՛լ որդի, դու սխալ ես աղօթում Աստուծուն. դու ասա՛. «Աստուած, դու ինձ ողորմիս. Աստուած, դու ինձ ողորմիս»։

Նաւակն առաւ սլացաւ իր հետ տանելով ալեզարդ եպիսկոպոսի սպիտակ մորուքը. հովիւը դանդաղօրէն հեռանում էր նրան և անվերջ կրկնում. Աստուած, դու ինձ ո-

ողորմիս. Աստուած, դու ինձ ողորմիս։» Սակայն նրա ուշքը բոլորէապէս գրաւեցին երկնքով անցնող կռունկները, և նա մոռանալով վանահօր սովորեցրած աղօթքը՝ սկսեց դարձեալ իր առաջւանը կրկնել. «Աստուած, ես քեզ ողորմիմ։ Աստուած, ես քեզ ողորմիմ։» Բայց իսկոյն մտաբերելով, որ ինքը սխալ է աղօթում՝ վեր կացաւ թաղիքի վրայից և ջրի վրայ վանահօր յետևից վազելով՝ սկսեց բարձրաձայն աղաղակել. «Սրբազա՛ն, սրբազա՛ն, ես մոռացայ քո սովորեցրած աղօթքը եւ դարձեալ սխալ եմ՝ աղօթում։ Աստուծո՛ւն»։

Եւ մեծաւորաց ալևոր վանահայրը այդ ահեղ հրաշքից կրկնակի զարհուրած արտասուալից աչքերը դէպի երկինք յառեց, փառք տուեց Աստծուն և ապա զառնալով հովիւին սրտառուչ ձայնով ասաց. «Գնա՛, որդեակս, գնա՛. դու կրկին քո խնացածի պէս աղօթի՛ր, որովհետեւ Աստուած իրան պիտոյների ոչ թէ խօսքերին է նայում, այլ սրտին»։

Տիգրան Ք. Վարդանեանց

Ն Ո Ր Գ Ո Ր Ծ

Գարնին վարպետ, քեզ նոր գործ տամ
Եւ իմ ուխտիս հաստատ մնամ։
Էլ չեմ պահիլ սուր, հրացան
Ոչ ինձ վրայ, ոչ էլ իմ տան։

Կոտրիր սուրս՝ այս պողպատից,
Որ շատերին զրկեց կեանքից...
Ծեծիր, շինիր ուրագ, կացին,
Որ բանացնէ մեր գիւղացին։

Հրացանս դիր քո վառ քուրէն,
Սղոց ու դուր դրանից ձուլեն,
Ժիր հիւանդը ձեռքներն առած՝
Տուն-տեղ շինեն քոլոր մարդկանց։

Իսկ աւելցած մանրիկ մասեր՝
Ձուլեն, շինեն սուր գրիչներ,
Մանուկներին մենք բաժանենք,
Որ խաւարից քոլորս փրկենք։

Պէտք է փշրել զէնքը քոլոր,
Հեռացնել այդ գործիքն ստոր,
Որ մեզանից կեանք է խլում,
Անժամանակ հողը ղնում...

*
* *

Արի՛ք, եղբարք, փշրենք զէնքերը,
Դարբնի՛ն, շինի՛ր դուն գրիչներ։

Որմնադիր՝ **Մ. Թամրազեանց**



«ԼՈՒՌՈՒ ԲՂՈՒՆՂԸ ՈՐ ՀԱՇՀՈՒՄ Է՝

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ»

(Ժող. հեքիաթ Ռազիկաշխլուց)

1.

Կար մի թագաւոր։ Նա շատ խիստ և ինքնասած մարդ էր։ Ինչ որ ասէր՝ եթէ չկատարէին՝ աշխարհը քարուքանդ կանէր։

Մի անգամ իր վեզիրին հարցրեց.—Լուռու ղուղը որ հնչհնում է՝ ինչ է ասում։ Պիտի լուծես՝ թէ չէ գլուխդ թռցնել կըտամ։

Վեզիրը շատ նեղացաւ. գիտէր թագաւորի ինչ խելքի տէր լինելը, գիտէր, որ իրան լաւ օր չի սպասում։ Ինքը խելօք մարդ էր, բայց վայ թէ չըկարողանայ թագաւորի ուզած պատասխանը տալ... Ճարը կտրած, հաւաք երկաթէ կօշիկները, յիշեց Աստծու անունն ու ճանփայ ընկաւ գնաց. «գուցէ,—ասում էր,—ուրիշները կարողանան այս հանելուկը լուծել»։

2.

Ճանապարհին պատահեց մի մարդու։

—Բարով։

—Աստծու բարին։

Ու գնացին իրար հետ։ Շատ ման եկան, թէ քիչ, վերջը յոգնեցան։ Վեզիրն ասաց.—Արի, կամ դու ինձ շալակիր, կամ ես քեզ, թէ չէ խիստ յոգնեցի։

Ուղեկիցը զարմացած նայեց նրա երեսին։

—Հէր օրհնած,—ասաց նա,—սեպհական ոտներս հազիւ եմ քարշ տալիս, էլ ինց կարող եմ քեզ շալակել։

3.

Երանք կրկին բաւական ճանապարհ անցել էին։ Ճանապարհի ծայրին մի անտառ կար։

—Մտիր անտառը և դուրս բեր մի-մի ոտ. երեք ոտով շատ աւելի լաւ կերթանք,—ասաց վեզիրը։

—Ի՞նչ ես հրամայում,—պատասխանում է ուղեկիցը.—Աստուած մեզ ստեղծելով՝ երկու ոտ է տւել, երրորդն ես ո՞րտեղից կտրեմ։

Վեզիրը ձայն չըհանեց։

4.

Շատ ման եկան, թէ քիչ, վերջը մի արտ տեսան։ Այնպէս արտ էր բուսած, որ էլ ասել չի ուզում։

—Ի՞նչ կասես,—հարցրեց վեզիրը,—այս արտը հընձած է թէ չէ։

—Հէր օրհնած,—մի՞թէ չես տեսնում, որ հնձելու է, էլ ո՞ւր ես հարցնում։

Վեզիրը կրկին պատասխան չըտւեց։

5.

Էլի բաւականին տարածութիւն անցան։ Տեսան, որ ննջեցեալ էին տանում։

—Ի՞նչ կասես. այս մարդը մեռած է թէ սաղ,—հարցրեց վեզիրը։

Ուղեկիցն այլ ևս համբերութիւնը կորցրեց ու յանդիմանելով ասաց.

—Ա՛յ մարդ, դու կամ սարսաղ ես, կամ թէ չէ չափազանց խելօք. ապա էլ ի՞նչ հարցնել է ուզում, որ սա մեռած է և ոչ թէ սաղ։

6.

Շատ ման եկան, թէ քիչ ման եկան, վերջապէս եկան

հասան վեզիրին ուղեկցողի տունը։ Ուղեկիցը վեզիրին ներս հրաւիրեց։ Վեզիրն էլ չըմերժեց։

Այն գիշերը լաւ պատւեց ու հանգստանալու համար նրան առանձին սենեակ առաջնորդեց։

Տանտէրը մի աղջիկ ունէր. երբ հիւրն առանձնացաւ, աղջիկն իր հօրը հիւրի ով լինելը հարցրեց։ Հայրն ասաց, թէ թագաւորի վեզիրն է, բայց այնպիսի բաներ էր հարցնում, որ անպատճառ սարսող պիտի լինի։

Դրանց խօսակցութիւնը վեզիրը միւս սենեակում պարզ լսում էր։

—Բայց և այնպէս՝ ինչ էր հարցնում,—հարցրեց աղջիկը։

—Ճանապարհ գալիս երբ յոգնեցանք, նա ինձ ասաց՝ կամ դու ինձ շալակիր, կամ ես քեզ կշալակեմ։

—Յետոյ դու ինչ պատասխան տւիր։

—Ի՞նչպէս թէ ինչ պատասխան. առանց բեռի էլ հազիւ էի ոտքերս քարշ տալի, էլ նրան ո՞րտեղ շալակէի։ Ի՞նչ էլ հէնց նոյնն ասացի։

—Հայրիկ, նա դրանով քեզ հասկացրել է, թէ կամ դու հէքիաթ պատմիր, կամ ես կըպատմեմ. այդպիսով միաժամանակ և՛ կըգըաւենք, և էլ յոգնածութիւն չենք իմանայ։

—Առաջանալով՝ հասանք մի անտառի։ Վեզիրն ինձ ասաց. մենք երկու ոտ ունենք, յոգնեցինք, մարը ու երրորդն էլ կարիր, դուրս բեր։

—Իսկ դու ինչ պատասխանեցիր, հայրիկ։

—Ի՞նչ պիտի պատասխանէի. քանի որ Աստուած մեզ այսպէս է ստեղծել, երրորդ ոտը ես նրան ո՞րտեղից թաւազա անէի։

—Չէ, այդպէս չըպիտի պատասխանէիր. նա քեզ հասկացրել է,—մարը մի-մի փայտ կարիր, էլ յոգնածութիւն չենք իմանայ։

Աղջկայ ասածները հօր գլխում շատ ու քիչ նստեցին, ու նա շարունակեց.

—Ճանապարհները շարունակելով, մի շատ սիրուն արտ տեսանք։ «Այս արտը հնձած է թէ հնձելու է», հարցնում է նա.—ինչ ես հրամայում, ասում եմ ես, ինձ փորձում ես թէ ինչ է. մի՞թէ չես տեսնում, որ հընձելու է։

—Այն արտը երևի իր տէրը ծախած պրծած է ունեցել ու դրա համար էլ արդէն հնձած ու կերած պիտի համարել,—բացատրեց աղջիկը։

—Մի գիւղում ննջեցեալ էին տանում։ Վեզիրը հարցնում է. «Այս մարդը սո՞ղ է թէ մեռած»։ Այստեղ արդէն համբերութիւնս հատաւ ու յանդիմանելով ասացի. կամ դու՛ ես սարսաղը, կամ ինձ ես սարսաղի տեղ ընդունում. մի՞թէ չես տեսնում, որ մեռած է։

—Չէ, հայրիկս, չէ. շատ իզուր ես բարկացել,—ասաց աղջիկը.—եթէ այն մարդը ժողովրդի համար մի որևէ լաւութիւն արած լինի, նա մեռած չի համարւում. իսկ եթէ ոչինչ,—մեռած է ու քամու պէս կանհետանայ,—ասաց աղջիկը։

Վեզիրը ամեն ինչ լսեց, շատ հաւանեց աղջկայ խելացի բացատրութիւնները և ինքն իրան յուսադրեց, թէ միայն նա կարող է ինձ իմ նեղ ղրութիւնից հանել, թագաւորի տւած հարցի բացատրութիւնը տալով։

7.

Մի՛ւս օրը վեզիրը դիմեց տանտիկնոջը, ասելով.

—Բարի եղէք ցոյց տալու ինձ ձեր աղջիկը. ես կամենում եմ նրան մի խօսք հարցնել։

Տանտիկինն իր աղջկան ներկայացրեց։

Վեզիրը ասաց.—Երևում է որ խմաստուն աղջիկ ես, խնդրում եմ, որ այս խօսքերն էլ լուծես. լոքու բղուղը որ չխչխում է՝ ինչ է ասում:

Աղջիկը պատասխանեց.—Լոքու բղուղը որ չխչխում է, նա ասում է կրակին. «ա՛յ կրակ, բաւական է ինձ այրես ու եփ գաս, թէ չէ կը թափւեմ ու կը հանգցնեմ քեզ»:

Վեզիրն աղջկայ իմաստուն պատասխանը շատ հաւանեց. դրա համար էլ նրան մի թանկագին ընծայ տւեց ու յետ դարձաւ մայրաքաղաք։

8.

Ներկայանալով թագաւորին, վեզիրը բացատրեց նրա հարցրած խօսքերի միտքն այնպէս, ինչպէս որ աղջիկն էր ասել։ Թագաւորը շատ հաւանեց նրա պատասխանն ու հարցրեց, թէ ո՞վ է պատմել նրան իր ասածների միտքը։

Վեզիրն ամեն ինչ մանրամասն պատմեց։

Այն ժամանակ թագաւորը վեզիրին ուղարկեց, այն աղջկան բերել տւեց իր տունը և թագուհի դարձրեց։ Նրա ծնողներին էլ բախտաւորացրեց։

Դրանից յետոյ, խելօք կնոջ շնորհիւ, թագաւորի բնաւորութիւնը միանգամայն փոխւեց, աւելի համբերող, ժողովրդի համար սիրան էրւող, իմաստուն ու ողորմած դարձաւ։

Թարգմ. վրացերէնից **Գ. Ռաբուրեան**



Օդակաւոր եղջերուն

Մի անգամ մի թագաւոր որսի ժամանակ վրայ հասաւ մի եղջերուի։ Սարսափահար եղջերուն անշարժ կանգնած մնաց թագաւորի առաջ։ Դողալով ամբողջ մարմնով՝ նա շեշտակի նայում էր թագաւորի աչքերին. նրա ոտները ծալւում էին երկիւղից, աչքերից կամաց հոսում էին արցունքները։ Թագաւորի սիրտը շարժւեց, և նա վճռեց եղջերուին չըզրկել կեանքից։ Միայն թագաւորը հրամայեց, որ նրա կոտոշին (եղջիւրին) մի ոսկէ օղակ անցկացնեն, իսկ օղակի վրայ գրեն տարեթիւն ու թագաւորի անունը և ազատ բաց թողնեն։

Այդպէս էլ արին։

Եղջերուն ուրախութեամբ կրկին վազեց անտառ, իսկ թագաւորը վերադարձաւ տուն։ Նա շուտով հիւանդացաւ ու մեռաւ։ Նրան յաջորդեց իր որդին։ Սակայն այդ որդին էլ մեռաւ և գահ բարձրացաւ սրա որդին։ Իսկ եղջերուն շարունակում էր անվնաս ապրել անտառում։

Մի անգամ նոր թագաւորը որսի ելաւ այն իսկ անտառը, որտեղ իր պապը արձակել էր եղջերուին։ Եւ ահա որսորդների առաջ կրկին երևաց այդ եղջերուն։ Նա բոլորովին ծերացել էր, բայց նրա եղջիւրի վրայ դեռ փայլում էր ոսկեայ օղակը։ Զարմացած նայում էր նրան երիտասարդ թագաւորը, մինչև որ օղակի արձանագրութիւնը հաղորդեց նրան իր նախնիքի փառքի մասին։

Եւ երբ հաշուեցին, տեսան, որ օղակը անցկացնելուց յետոյ անցել է ուղիղ հարիւր տարի։

Եղջերուն հարիւր տարի խաղաղ ու երջանիկ ապրել էր անտառում՝ շնորհիւ նրան, որ թագաւորը խնայել էր նրա կեանքը։

Երջանիկ է այն մարդը, որ իր մահից յետոյ մի բարի գործի կենդանի արձան է թողնում, արձան, որ հարիւրաւոր տարիներ գոյութիւն է ունենում։

Թարգմ. Զ. Տ.—Գ.

Հայրիկի-մայրիկի ընտանի

Դժբաղդ երեխաները

VI.

Հետևանքն ուրախալի եղաւ նրանց համար, որոնք չէին ցանկանում Ոսկինարեանների արձակումը դպրոցից։

Բժիշկը յայտնել էր, որ նրանք ունեն ֆիզիքական և մտաւոր այնքան առողջութիւն, որ կարող են սովորել դպրոցում։

—Հաւատացած եմ, որ այդ բժիշկը, ինչպէս մեր ուսուցիչների մեծամասնութիւնը, հարկաւոր լրջութեամբ չեն վերաբերւում գործին, իսկոյն բարկացաւ պ. Է.։

Ներան ասացին.

—Բժշկի վկայութիւնն էլ ապացուցանում է, որ մեր դպրոցում Ոսկինարեանների հետ պատահող տխուր երևոյթներն իսկապէս դպրոցի պակասութիւնն են կազմում և ոչ թէ առաջ են գալիս Ոսկինարեանների հիւանդութեան պատճառով։ Պէտք է դպրոցն ազատել թերութիւններից և ոչ թէ անմեղ երեխաներին արձակել...

—Ահա դպրոցը և ահա մենք, տեսնենք ինչպէս կազատենք նրան այդ թերութիւններից։

—Կազատենք իսկապէս, եթէ կայ անկեղծ ցանկութիւն և դրա հետ միասին գործ կըղնենք ջանք ու եռանդ։

—Ազատենք, ես անկեղծ կերպով ցանկանում եմ և կաշխատեմ դրա համար, ասաց պ. Է. յուզուած։

—Եւ անպայման դժուար չի լինիլ դա, անկեղծ ուրախութեամբ գոչեցինք մենք, ոտքի կանգնելով։

VII.

Իսկապէս դժուար չեղաւ այդ։

Մի կողմից օրերն անցնելուն հետ մենք նկատում էինք աշակերտների բարեկրթութեան մէջ խոշոր փոփոխութիւն դէպի

լաւը և այդ հանգամանքն ինքնըստինքեան պակասեցնում էր տըգեղ երևոյթների թիւը դպրոցում։ Երեք ամիս հազիւ էր անցել տարւայ սկզբից, արդէն համարեա խպառ վերացել էին աշակերտների մէջ մի շարք վայրենի յատկութիւնները, որոնք տարւայ սկզբում մեզ այնքան հոգս ու վիշտ էին պատճառում։ Մենք ուսուցիչներս շատ յաճախ ասում էինք միմեանց, որ այժմ իսկապէս մենք ունենք դպրոցական աշակերտութիւն և դա ասում էինք, ինչ ասել կուզէ, մեծ բաւականութեամբ։

Չէնց միայն այս հանգամանքը բաւական էր հաւատալու, որ աշակերտներն այսուհետև Ոսկինարեանների հետ լաւ կը վարուեն և չեն աշխատիլ նրանց վշտացնել։

Բայց մենք դրանով չըբաւականացանք. ձեռք առանք նաև մի շարք այլ միջոցներ։

Ամեհից առաջ հոգացինք խեղճ երեխաների արտաքինի մասին. տւինք նրանց մաքուր զգեստ, գլխարկ ու ոտնաման. բացի դրանից, դաստիարակչուհու ջանքերով գտանք մի բարեսիրտ կին՝ նրանց դրացիներից, որ յանձն առաւ հսկել երեխաների մաքրութեան վրայ։

Բժշկի քննութիւնից երկու օր յետոյ Գուրգէնն ու Մինասը դպրոց էին գալիս արդէն կոկիկ հագնւած և մաքուր։ Այդ հանգամանքը հէնց սկզբից անմիջապէս վոխեց աշակերտների վերաբերմունքը դէպի նրանց. նրանց հետ խօսում էին աւելի ընկերաբար և քչերն էին շարունակում ծաղրել նրանց, այն էլ յանդիմանութիւն էին ստանում միւս աշակերտների կողմից։

Այդպէս արդէն լաւ էր. բայց քանի Գուրգէնն ու Մինասը կըշարունակէին դասերին ոչինչ չըսովորել, ընկերները դրանց կանոնաւոր աշակերտ չէին համարիլ։ Այդ պատճառով մանկավարժական ժողովը պարտաւորեցրեց բոլոր այն ուսուցիչներին, որոնք դասեր ունէին Ա. հիմնական բաժանմունքում, դէպի Գուրգէնն ու Մինասը առանձին հոգ տանեն՝ դասերից դուրս նրանց հետ պարապեն, որպէսզի նրանք քիչ թէ շատ մի բան սովորեն։

Իսկապէս շատ չանցաւ, երբ Գուրգէնն ու Մինասը սկսեցին ուշադրութեամբ հետևել դասերին, լսել և արդէն շատ անգամ ճշտութեամբ պատասխանել։

Այդ բանը նկատում էին նրանց բոլոր դասընկերները և շատ անգամ միմեանց ուրախանալով ասում էին՝ Գուրգէնն ու Մինասը հիմա սովորում են, լաւ է։

Բայց մենք միայն դրանցով չըբաւականացանք։

Վերջին տխուր դէպքը պատահելուց յետոյ աշակերտների

մէջ արդէն տարածւել էր, որ Գուրգէնն ու Մինասը գժեր են, այդ պատճառով նրանց պէտք է դուրս անեն դպրոցից։

Բժշկական քննութիւնից յետոյ անմիջապէս յանձնարարւեց բոլոր դաստիարակներին, որ իրանց դասարաններում մանրամասը խօսեն այդ մասին և հասկացնեն աշակերտներին, որ Գուրգէնն ու Մինասը գժեր չեն, սխալ է, թէ նրանց դպրոցից դուրս պէտք է անեն. նրանք դժբաղդ են, որովհետև չունեն ոչ հայր, ոչ մայր և այն աշակերտները, որ նրանց ծաղրում են, չարչարում են, ամենավատ բանն են անում։ Դաստիարակները խօսել էին լաւ ընկերական կեանքի մասին, հրաւիրել էին նրանց, որ ընկերարար վարւեն Գուրգէնի և Մինասի հետ, սիրեն նրանց և երբէք, ոչ մի անգամ այլևս նրանց «գիժ» չըկանչեն։

Բոլոր դասարաններում աշակերտները լսել էին ամենամեծ ուշադրութեամբ, բոլորի սիրտը շարժւել էր և մինչև անգամ շատերն արտասւել էին։ Իսկ նրանց ծաղրողներից մի քանիսը նոյն իսկ ղջացել և, իրանք իրանց դուրս գալով, ներողութիւն էին խնդրել դասարանի առաջ։

Ահա այդպէս լաւ եղաւ Գուրգէնի ու Մինասի բանը։ Բոլոր աշակերտներն ուրախ էին, որ նրանք այժմ սովորում են, դասամիջոցներին ամենքի հետ խաղում են և ոչոք այլևս չի կռւում նրանց հետ։

Իսկ ուսուցիչների ուրախութիւնն անչափ էր։ Պ. Է. ամեն անգամ իր ուրախութիւնն էր յայտնում, որ մենք դիմադրել և թոյլ չէինք տւել Ոսկինարեանները դպրոցից արձակել։

* * *

Անցել էր մի-երկու ամիս։

Դպրոցում արդէն բոլորովին մոռացւել էին Գուրգէնի ու Մինասի հետ պատահած դէպքերը։

Նրանք այժմ կանոնաւոր աշակերտներ էին, թէպէտ, ի հարկէ, թոյլ էին սովորում։

Նրանց սէրն այժմ աւելի մեծացել էր դէպի դպրոցը, դէպի ուսուցիչները ու դէպի իրենց ընկերները։

Զբօսանքի գնալիս նրանք ուրախ ու գեղեցիկ քայլում էին աշակերտական ուրախ շարքի մէջ և պէտք էր տեսնել, ինչպէս նրանք ուրիշների հետ հրճւանքով վազվզում, խաղում ու զւարճանում էին։

Նրանք այժմ կարծես լիովին բաղդաւոր էին զգում իրանց։

Առաջւայ նման ես էլի յաճախ տեսնում էի Գուրգէնին ու

Մինասին փողոցում անցնելիս, էլի առաջվայ նման նրանք ինձ ուրախութեամբ բարևում էին, բայց այժմ շատ տարբեր էր առաջւանից։

Նրանք առաջւայ նման էլի շարունակում էին իրար սիրել, միասին լինել, բայց այժմ նրանք այնպէս անբաժան չէին միմեանցից, ինչպէս առաջ. այժմ նրանք ուրիշ ընկերներ էլ ունէին և շատ անգամ նրանց հետ էին, շատ անգամ նրանց հետ միասին խօսելով էին տուն դառնում և ուսումնարան դիմում։

Ուրիշների հետ նրանք այժմ գնում էին զբօսնելու ու խաղալու ծովափում, լեռներում և ուրիշ տեղերում։

Այսպէս լաւ եղան Գուրգէնն ու Մինասը։

Ընկերները սիրելով բաղդաւորեցրին այն երկու դժբաղդ մանուկներին։

Նրանք աշխարհի վրայ ոչինչ չունէին և այնուհետև դպրոցը, ուսուցիչները և ընկեր-աշակերտները դարձան նրանց համար ամեն ինչ՝ և՛ հայր, և՛ մայր, և տուն ու բաղդաւորութիւն։

Նրանք ղրանով իսկապէս գոհ էին ու բաղդաւոր։

Սէյրի

Ի՞ՆՉ Է ՍՊԱՍՈՒՄ...

Դարեր շարունակ հայը ծառայեց
Մարդկութեան պատիւ բերող գործերին,
Նա մի չըլսած տենդով աշխատեց
Կեանք պահել արեան, կրակի մէջին։

Երբ աշխարհ համայն տիրում էր խաւար
Եւ կոպաշտական օրէնք անարդար,
Հայն էր, որ առաջ ինքը ընդունեց
Քրիստոնէական ազատ գաղափար։

Մենք երկնքի դէմ յանցանք չենք գործել
Եւ ոչ քնութեան դէմ ենք մեղանչել,
Ծիրող կարգերին տուել ենք պատիւ,
Դառը քրտինքով ապրել ենք հազիւ։

Բայց ի՞նչ ստացանք դրանց փոխարէն—
Մի չըտեսնուած պատիժ անօրէն.
Անգութ Եւրոպան մեր ճիչը խեղդեց,
Գերութեան շղթան մեր վզին կոեց։

Վա՛յ մեզ, քշում են ազգերի շարքից
Եւ հալածում են մեր սիրած երկրից.
Այդ է հաստատում պատմութիւնն արդար,
Այդ են վկայում մարդիկ անաչառ։

Ասէք, ո՛վ աստղեր, արեւ, դու, լուսի՛ն,
Որ լուռ վկայ էք մեր պատուհասին,
Արդեօք կըծագէ՞ փրկութեան արեւ,
Թէ՞ այդ մի յոյս է, այն էլ կարճատեւ։

Եւ դուք, ո՛վ կարող տարերք երկնային,
Պատռէք շար բաղդի վարագոյրը սեւ,
Ի՞նչ է սպասում կենսամաշ հային,
Ասէք, մի նոր կեա՞նք, թէ՞ մահ յարատեւ...

Մ. Եզգիբարեան

ԱԲՐԱՀԱՄ ԼԻՆԿՕԼՆ

Միացիալ Նահանգների XVI-րդ նախագահ Աբրահամ Լինկօլնը հասարակ երկրագործ էր. նրա ծննդեան հարիւրամեակը Ամերիկան նորերս կատարեց։ Եղել է ուսուցիչ տարանում ընդամենը վեց ամիս։ 1832 թ. կամաւորների պետ է ընտրւում և պատերազմում հնդիկ զօրավարի հետ։ Ապա պօստի կառավարիչ է ընտրւում և չըղադարելով մտաւորապէս զարգանալ, ուսումնասիրում է երկրագործութիւն և իրաւաբանութիւն, ընտրւում կոնգրէսի պատգամաւոր։

Ուխտեալ հակառակորդ լինելով ճորտութեան, ամեն ճիգ թափում է նրա կատարեալ ազատութեան համար։ 1860 թ. ընտրւում է հասարակապետութեան նախագահ և հետևեալ տարին քիչ էր մնում, որ սպանէին։ Լինկօլնի նախագահ ընտրւելն ազդանշան էր Հիւսիսային Ամերիկայի պատերազմ սկսելուն հարաւայինների հետ։ 1865 թ. նորից ընտրւում է հասարակապետութեան նախագահ։ Բայց սրանից չետոյ Ուաշինգտոնում, մի մոլեռանդ դերասան ատրճանակով սպանում է նրան թատրոնում։

Աբրահամ Լինկօլնի կենսագրութիւնը երկար է և շատ խրատական։ Ներկայ տարում Ամերիկան մեծ հանդէսով տօնեց նրա ծննդեան հարիւրամեակը։



Մանկական Աշխարհ

№ 3 Պատկերազարդ զուարճ ամսաթերթ № 3

Հրատարակւում է մասնակցութեամբ ժրաջան աշակերտուհիների եւ աշակերտների:

Ա Զ Գ

Որովհետեւ առաջիկայ ամսին քննութիւն պիտի տամ գիմազիայի առաջին դասարանը մտնելու համար և ասոտիկ զբաղած եմ առայժմս դասերով, այդ պատճառով **Մանկական Աշխարհի** *դեկը ներկայ №-ից սոսնձնում է երկրորդ խմբագիր պ.* **Ֆարհատը:**

Ա Մ Բ Ի Կ

Առաջին խմբագիր

Մանկական Աշխարհի

ՖԱՐՀԱՏ

Ես իսկ և իսկ քսաներորդ դարու հարազատ զաւակն եմ: Զարգացած, կայտառ, աշխարհներ պտտած, զանազան երկիրներում իմ հասակակիցների հետ մրցութեան դուրս եկած և շատ յաճախ մրցանակներն էլ վաստակած:

Ես ծնւել եմ այն թւականին, որ տասը տարիս լրանում է դեռ առաջիկայ 1912 թ. յուլիսին: Ամբիկի նման ես թէև չեմ ծնւել Աղբիւրի խմբագրատանը, թէև նրա նման ես չեմ թոթովել մեր սրբազան հայրենիքի գեղածիծաղ մարզագետիններում, անմահական աղբիւրների ափերում անուշաբոյր ծաղիկներ փայփայելով, հայրենի գետակներում փոքրիկ ձկների հետ պար բռնելով, բայց, ինչպէս տեսնում էք, այսօր ես էլ եմ կարողանում նրան ընկերանալ և մեր զարթ Մանկական Աշխարհ հանդիսի դեկն ըստանձնել:

Ուրեմն, ընկերներ, պատիւ ունեմ ներկայանալ։

Ես, Ֆարհատս, ծնուել եմ Ֆրանսիայում, մնուել Բելգիայում, թոթովել Շուէյցարիայում, ապրել Գերմանիայում, բարձրացել Ալպերի ձիւնապատ գագաթները, լողացել Շուէյցարիայի հրաշագեղ լճերում, թռել գերմանական ճեպընթացներով, քարշ եկել ռուսական վագոններով և ընկել նաւթի մայրաքաղաք Բագուն, որի գովասանքը, թէ պարսաւանքը, մեր հարևան Թրքուհի Գոհարիկը շատ մանրամասն անցեալ ամիս արաւ մեզ։

Ես թէև ծնուել եմ շատ հազար վերստ հեռու հայրենիքից, սակայն՝ ես մնուել եմ այնտեղ, ուր մարդկային տոկունութիւնը, շիտակութիւնը, աշխատասիրութիւնը Եւրոպայում և Ամերիկայում օրինակ է ընդունուում։

Ես մնուել եմ Բելգիայի Լիէժ քաղաքում։ Բելգիան մի փոքրիկ պետութիւն է, աւելի փոքր, քան մեր Ղարաբաղը, և նրա սարերը, քերծերը, ջրերը շատ նման են մեր Ղարաբաղին։ Այս երկրի մարդիկ իրանց տոկուն աշխատասիրութեամբ մրջիւնների նման ցրւած են թէ Եւրոպայում և թէ հէնց մեր Ռուսաստանում, կովկասում։ Սրանք օտարերկրեայ քաղաքներում էլէքտրաքարշ են շինում, կամուրջներ կառուցանում, էլէքտրականութեամբ փողոցներ լուսաւառում, սալայատկում, ջրանցքներ անցկացնում և այլն և այլն։

Ֆ Ա Ր Հ Ա Տ

Երկրորդ խմբագիր

Մանկական Աշխարհի

Ի հարկէ բելգիացիք իրանց հմտութեան ու աշխատասիրութեան պտուղներն էլ լիուլի ըստանալով, հայերիս նման չեն տանում օտար աշխարհներում վատնում։ Երբ նրանք հաստատուում են, իրանց դրամները փոխադրում են հայրենիք և գործադրում նրա պատուին ու բարգաւաճման։ Սարերի, քերծերի կուրծքերը պատրաստում են, լանջերը հարթում և երկաթուղային ցանցերով միացնում բոլոր կէտերը կենտրոնի հետ։ Լիէժը, մանաւանդ նոր քաղաքը, գեղեցիկ է. անթիւ կամուրջներ, յարմար երթևեկու-

թիւն և էժան ուտեստ ու բնակարաններ։

Բելգիան մեծ զօրք չունի և որ պետութիւն բոնի ոյժով եթէ փչէ, կարծէք թէ իսկոյն կըկործանուի։ Բայց Բելգիան հզօր է իր խելքով, իր շիտակութեամբ։ Նա կեանքի այնպիսի պայմաններ է իր համար ստեղծել, որ ոչոք նրան չի համարձակուիլ անպատուել։

Հարևաններն են Անգլիան, Հոլանդիան, Ֆրանսիան, Շուէյցարիան և Գերմանիան ու սրանց հետ մրցում է փոքրիկ Բելգիան, խաղաղ կուլտուրական պայքար մղելով հետները և օր-օրի վրայ էլ աւելի ու աւելի տանելով յաղթանակներ։

Աշխարհիս ամենալաւ գէնքերը՝ հրացան, տրճանակ շինողը Լիէժն է։ Մի անգամ Տիգրան-մօրեղբօրս հետ... (հիմա կըհարցնէք այդ Տիգրան-մօրեղբայրդ ո՞րտեղից որտեղ։ Սպասեցէք կպատմեմ)։ Էհ, երբ Տիգրան-մօրեղբօրս հետ գնացինք հրացանների պահեստը դիտելու, ես մեացի ապշած։ Իմ ականջներով լսում էի, որ պատմում էին թէ այնքան միլիոն հրացան կայ այնտեղ, որքան Եւրոպայում զօրք չըկայ։ Կատակ չի-մանաք, ընթերցողներ, ճիշտը, իմ ականջներով լսածն եմ պատմում, աչքովս էլ տեսածը։

Բելգիան նշանաւոր է իր գործարաններով, քարի հանքերով։ Ամենաընտիր ապակի և հայելի Բելգիան է պատրաստում։ Ապակուց տներ են կառուցանում, փողոցներ սալայատակում, տներ ծածկում։ Բելգիան նշանաւոր է իր քրէծներով (վայրենի այծեր) և ընտանի, խոշոր, համարեա կովի մեծութեամբ այծերով։ Բուսականութիւնը ճոխ է և փարթամ. ունի հանքային ջրեր։ Մայրաքաղաքը Բրիւսէլ, որ Պարիզից երկու ժամուայ ճանապարհ է, գեղեցիկ։ Այստեղ նշանաւոր են կանանց ձեռագործ շղարշներ, եղրներ, չիքլի հագուստներ։ Չիքլի իսկական հագուստ, որ այնքան թանգ ծախուում է մեր երկրում, Բելգիայի կանայք ու օրիորդներն են իրանց ձեռքով գործում։

Լիէժի դիմաց, գետի միւս ափին Սէրէն գործարանական փոքրիկ քաղաքն է։ Մի քաղաք, որի կատուրներից կարծէք կրակի ջրվէժներ, պատերից կրակի առուներ և գետեր են հոսում և գնալով-գնալով ծովանում, սառոյց կըլուսմ, ապա այդ կոյտերը տանեակ արշին բարձրութեամբ անհամար սիւներից անտառ կազմում։ Սիւները ծածկում են, տափակացում, ոլորում և ապա կուտակում են՝ երկաթուղու ռէյլսներ, նաւերի կաթսաներ, վառարաններ, խողովակներ, շղթաներ, օղակներ, մեքենաներ հայլն, հայլն։

Եւ այդ բոլորը շինում, ստեղծում է մարդ-բանտորը։ Հինգ րոպէ այդ կրակի մէջ մենք չը կարողացանք կանգնել և զմայլել զանգւած երկաթ ջրվէժներով

իսկ բանւորներն ամեն օր տասնամեակ ժամ անընդհատ աշխատում են այս դժոխքում։

Լիժից ծնողներս տեղափոխուեցին Նանսի, որովհետև հայրս աւարտելով այտեղի ճարտարապետական նշանաւոր ճեմարանը, կամենում էր քննութիւն տալ և Ֆրանսիայի նոյնպէս շատ նշանաւոր Նանսիի ճեմարանում։

Ցիշողութիւններս կըզրեմ ձեզ Ֆրանսիայից էլ, Շուէյցարիայից էլ, Գերմանիայից էլ։

Մայրս Պետերբուրգի կանանց բժշկական ինստիտուտից, որ անգութ Անրէպը փակել էր ուել, եկել էր Շուէյցարիա և մտել Ցիւրիխի համալսարանը, սակայն պատմութիւնը երկար է, կըզրեմ ուրիշ անգամ։

Ծարհաս

ԳԱՐՆԱՆ ԳԱԼՈՒՍՏԸ

Եկաւ կենսատու, սիրուն նոր գարուն,
Զարթնեց բնութիւն,
Ուրախ երգում են հաւքերն օրնիբուն,
Խաղ ու խնդութիւն.
Կանաչ կոկոնից բացւում անուշակ
Շուշան, մանուշակ,
Սարի լանջերից վազում է վտակ,
Քչքչում աւազակ։

Կանաչ տերեւով ծածկւում են ծառեր,
Կանաչում դաշտեր,
Սարում փռւած են անհամար հօտեր—
Ոչխար ու գառներ.
Հայ երկրագործը լծած իր եզներ,
Վարում է դաշտեր,
Անուշ հնչիւնով ուրախ հօտաղներ
Երգում են տաղեր։

Գէորգ Վարդանեան

Իգդերի քաղ. դպրոցի Գ. բաժ. աշակերտ։



Ա Մ Ա Ն Յ

Առաջար. Ցավի. Կատապեսեաճի
(Ղարսի քաղաք. ուսուցիչ. աշակերտ)

Գտնել

Մի քաղաքի անուն
» գետի անուն
» ազգանուն
» գրքի անուն
» մարդի անուն

Իւրաքանչիւր գծած բառը բաղկացած լինի միմիայն հինգ տառից։

Այդ հինգ բառը գտնելուց յետոյ, իւրաքանչիւր գտած բառից վերցնել միայն երրորդ տառը (բոլոր վերցրած բառերը կը լինեն հինգ հատ) և այդ հինգ տառից կազմել մի յայտնի ազգանուն։

ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԱՍՏՂ № 1

	կ		ա			կ
		հ		և		ռ
			մ	ա	ժ	
	ա	ղ	ա	գ	ա	խ	ա
			ր	ն	վ	
		տ		ե		ս	
	ճ			ա			ր

Դասաւորեցէք այս տառերը այնպէս, որ տողի ճառագայթներում կարելի լինի կարդալ չորս բառ։

Հ Ա Ն Ե Լ Ո Ի Կ

Կայ մի բան, որով ինձ շատ անգամ
Պատուհասից եմ փրկել, ազատել,
Նրա անունը անցեալում փարթամ
Մի թերթի ճակատին եմ ես նկատել։
Այդ բառի միտքը փոխելու համար
Վերջից պոկում եմ ես միայն մի տառ,
Եւ ստանում եմ անուն մի հորի,
Որտեղ աւելի քան հարիւր տարի
Լցնում են անչափ ջուր ու շատ գինի,
Ցորեն բաւական, երբեմն գարի,
Միայն թէ լցնել ինչ կուզէ լինի,
Նա գոռում է միշտ՝ արի, հա արի։
Գ. Բ.

Թռչնաանման տիկին

Ներկայ 1909 թ. Աղբիւրի բաժանորդագինը դպրոցական աշակերտների և աշակերտուհիների համար 3 րուբլուց իջեցնելով մէկ ր. յայտարարել էինք, որ աշակերտները չըպիտի ստանան Աղբիւրի Ակունք յաւելուածը, սակայն ամէն տեղից սկսեցին թախանձել աշակերտները, որ զիջանենք նրանց և Աղբիւրի Ակունքը։ Կատարելով նրանց ցանկութիւնը, այժմ էլ աշակերտները շարունակ դիմում են մեզ, որ հնարաւոր կացուցանենք նրանց և Տարազ էլ ստանալու իջեցրւած բաժանորդագնով։

Աշակերտների այդ պահանջը, դժբաղդաբար, կատարել չենք կարող։ Բարձր դասատան աշակերտները կարող են իւրաքանչիւր դասարանի համար ստանալ Տարազ, որ կուղարկուի առաջին №№-ից։

Տարազն այնքան շքեղ է հրատարակւում, որ նրա ընդարձակ տարածւելուն նպաստելը իւրաքանչիւր զարգացած հայ հաճոյք և բերկրանք պիտի զգայ։

ԱՂԲԻՒՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Բազու. Ռ. Մ.—Շարունակեցէք, յարմարները կը տպագրուին.

Ն. Նախիջեւան. Դ. Ա.—Մենք ոչ մի պայման չունենք։ Մեր պայմանը, որ իւրաքանչիւր աշակերտ, աշակերտուհի երբ ստանում է Աղբիւրի №-ը, միայն ինքը չըբաւականանայ կարդալով և հիանայ, ինչպէս գրում էք, այլև իր շրջանում, իր ընկերակիցներին էլ հրաւիրէ օգտւել այդ արտօնութիւնից և ստանայ իր հասցէով Աղբիւր։

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԴԻՒՂԵՐՈՒՄ

(Նամակ խմբագրութեան)

—

Մարտի 6-ին Բագուից հիւանդ մօրս տեղափոխեցի Զանգեզուրի գաւառում, մեր ծննդավայրը Քալահունջ գիւղը։ Մայրս վախճանւեց մարտի 14-ին։ Թաղմանը մօրս յիշատակին դպրոցի չքաւոր աշակերտների ուսման համար դրամ բաժանեցի և դպրոցին էլ խոստացայ նւիրել **Աղբիւր** ամսագիրը։

Վերադառնալով Բագու և ներփակեալ 3 ր. բաժանորդագին **Աղբիւրի** ուղարկելով, Քալահունջ գիւղացիքս՝ **Միխայէլ, Սիմոն Ալէքսանդր Ալլաւերդեանցերս** խնդրում ենք **Աղբիւրն** ուղարկել Քալահունջ Հայոց Ուսումնարանին։

Միխայէլ Ալլաւերդեան.

Բագու, 6-ն ապրիլի։

ԵՐԵՔՇԱԲԹԻ. յունիսի 2-ին երեկ. 6½ ժ. հայ գրականագէտներն ու լրագրողները հրաւիրւում են շնորհ բերել գրական - գեղագիտական սալօնը (Աղբիւր-Տարազին կից) ՎԵՀԱՓԱՌ Տ.Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ թիֆլիսում ողջունելու, յարգանք մատուցանելու և իղձեր արտայայտելու համար խորհրդակցութեան։

Հայ խմբագրութիւնները հրաւիրւում են շնորհ բերել իրանց թերթերի պ. պ. խմբագիրներով, խմբագրութեան անդամներով և աշխատակիցներով։

Ոչ մի առանձին հրաւէր չի ուղարկւում։

ՅՕԳՈՒՏ ԱԴԱՆԱՅԻ ՎՆԱՍԻԱԾՆԵՐԻ

Կովկասեան հայ բոլոր Բարեգործական, Կուլտուր. Ընկ. միացեալ

ՄԵԾ, ԱՐՏԱԿԱՐԳ, ՇՔԵՂ ԶՔՕՍՍԱՆՔ

կը կայանայ շաբաթ յունիսի 6-ին

ԹԻՓԼԻՍԻ ՄՈՒԶՏՈՒԹԻՒՆ ԱՏՕՒՄԻ

Յմմրագրութեան Գրասենեակից

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 35 կ. մարկա և նոր հասցէի հետ հին, տպագրած հասցէն էլ, հակառակ դէպքում հասցէն չի փոխուիլ։

№ չը ստացող բաժանորդը պէտք է իր պահանջը յայտնէ իր բնակած քաղաքի պօստատունը գրաւոր, որպէսզի այդ գրութիւնն էլ տեղական պօստատունը Թիֆլիսի պօստատան միջոցով մեզ յայտնէ։ Հակառակ դէպքում բաժանորդի պահանջը մեր կողմից կը մնայ առանց բաւարարութեան։

Աղբիւրը՝ I հրատ. ամսական 25 կ.

Լոյս տեսաւ

Յ. ՍՕԼՕՎԵԱՆԻ

ՈՎԻՆ

(Պատկերը)

Գինն է 5 կ., ճանապարհածախսով 7 կ. Ցաս օրինակ գնողը ճանապարհածախս չի վճարում։ Դիմել՝ ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ խմբագրատունը։

ՋԸՆՔԻՒ ՄԵՆԱԽՈՉՈՐ

ՊԱՀԵՍՏ ԹՈՒՄԱՍՏՆԱՒՄ

Ա. ԲԻՏԿՈՎԻ

ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ

А. Биткова, въ Москвѣ

Б. Лубянка. **20**, Нижегород. Ярмарка, Шоссе.

Ձրի ուղարկում է չրտեսնած փառահեղ լիակատար գնահատուճները 1908 և 1909 թ., որ պարունակում է **ոսոխդական հուցաճնների** *այն ամեն տեսակները, ինչ կարելի է գտնել մեր մոլորակի վրայ, սկսած ամենաառաջնակարգերից մինչև նորագոյն ժամանակները։* **ՀՐԱՅԻՆՆԵՐԻ ԱՀԱԳԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ 5-ից մինչեւ 1000 rուբլի արժողութեամբ։**

Գները դուրս են մրցումից. 4—4

Օրերս լոյս տեսաւ ռուսերէն լեզուով Ատրպետի ժամանակակից և ուշագրաւ, պատկերազարդած

Атрпетъ

Мамедъ-Али Шахъ

Въ странѣ Льва и Солнца

գինը 1 ր.

Դիմել հեղինակին՝

Александрополь Атрпету. *3—1*

ԲԵՐԼԻՆՈՒՄ

փորձած հայ ուսուցչուհիներ, ուսուցիչներ, թարգմաններ առաջարկում են իրանց ծառայութիւնը Գերմանիա գնացող հայ ընտանիքներին։ Ցանձն են առնում երես առած, ճանապարհից չեզուած, ծոյլ երեխաներին դաստիարակել, պատրաստել, մոցնել գերմանական դպրոցները և խնամել։

Մանրամասնութիւնները իմանալ՝ Աղբիւրի խմբագրատունը։ 0—1

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ

վաճառւում են

Ցիսուս խաչակիր մեծադ.			3 ր. —
Էֆեզեհիա	—	—	3 » —
Ս. Էջմիածին	—	—	1 » 50 կ.
Ս. Մեսրոպ	—	—	1 » 50 »
Ս. Մահակ	—	—	1 » 50 »
Հայրիկը Օշականում	—	—	1 » 50 »
Վարդանանց պատերազմը			1 » —

Այս 7 պատկերը միասին ճանապարհածախսով 13 ր. փոխարէն 8 ր.

Վերադիր վճարով 9 ր.

Բելգիայի առևտրական նեմնդանը աւարտած

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

տալիս է դասեր ֆրանսերէն, գերմաներէն, ռուսերէն և հայերէն լեզ., հաշուապահութիւն և մաթեմատիկական առարկաններից։ Կատարում է թարգմանութիւններ և ամեն տեսակ հաշուապահական աշխատանքներ։ Դիմել՝ Бюро Печати, Тифлис. Мадатовск. 5. *3—1*

Տպարան «ՊՐՕԳՐԷՍ» Ընկ., Վելեամինովսկ. փող., № 7.